

Ադրիանուպոլէն վերագառնալէ անմիջապէս ետքը Կոլոտ պատրիարք Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցւոյ մէջ գումարեց «մեծահանգէս Սիւնհոդոս» մը՝ երկու աթոռներու մասին եղած կարգադրութիւնը Հայոց Կաթողիկոսին հաղորդելու համար (1716): Արքունի հրովարտակը, ժողովոյ պաշտօնական գրութիւնները, անշուշտ եւ Կոլոտի մասնաւոր նամակներն ալ, յատուկ վարդապետի մը ձեռքով փութացուցին Հայոց Հայրապետին:

Աստուածատուր Կաթողիկոս շատ դո՛հ եղաւ Կոլոտի կարգադրութիւններէն եւ անմիջապէս գրեց Մուշ, Գրիգոր Վարդապետին՝ որ ընդունի Երուսաղէմի պատրիարքութիւնը: Արդէն իրեն՝ Երուսաղէմի նորընտիր պատրիարքին ալ՝ գրած էին:

Գրիգոր Վարդապետ ալ յանկարծակիի եկաւ եւ շատ դժուարութիւն ցոյց տուաւ, բայց ամէն կողմէ եղած հրաւերն ու քաջալերութիւնը, մասնաւորապէս Կոլոտին թախանձանքը յօժարեցուցին զինքը:¹ անմիջապէս ճամբայ ելաւ դէպի Պոլիս, խանդավառ ընդունելութիւններու մէջ մտաւ մայրաքաղաք՝ 1717 Օգոստոս 18, վերափոխման տօնին օրը:

Կոլոտ՝ սիրով եւ արցունքով ողջագութեց «զիւր հայր մեծ Վարդապետն Գրիգորին».

«Ո՛վ սուրբ Տեղեացն պսակագիր,

Խոնարհեցար եւ եկիր.

Երեսս հող եւ մոխիր

Ճանապարհիդ որ եկիր» (Հաննէ, էջ 126):

1 «Զորս նորին (= Շղթյակրին) հարազատն եւ յանգիւստ վան Սբէյ Տան դարձաւ: Տեբ Յովնէ-Աստուածաբան վարդապետն, իմ հոգորդն Բաղէլէցի, ի համոզելն եւ թէ ի յորդորելն զժողովուրդն Աստուծոյ եւ մանաւանդ զընտրեալ հովիւն կարի յոյժ ջատագովութեամբ գուն դործեաց եւս քան զեւս առաւել ջանաց եւ աշխատեցաւ մինչ զի հազիւ յանձն առնուլ ետ նմա...» (Ծագութեալ հարցաւ. Չեռագիր Սգդ. Մատենադարանի Յիշատակարան):